



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ  
ՆԱԽԱԳԱՀ

6, Vazgen Sargsyan str., 0010, Yerevan  
Tel.: (37410) 583 841  
Fax: (37410) 565 496

0010, Երևան, Վազգեն Սարգսյան, 6  
(Հեռ.) (37410) 583 841  
Ֆաքս (37410) 565 496

0010, Ереван, Вазгена Саркисяна, 6  
Тел.: (37410) 583 841  
Факс: (37410) 565 496

01.10.2010      N 06.1-04/0889-10

Զերո N

Հայաստանի Հանրապետության վարչապետ  
պարոն Տիգրան Մարգարյանին

Մեծարգող պարոն Վարչապետ,


Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածներով՝ Զեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 249Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եզրակացությունը»:

Առողիք՝ 6 էջ:

Հարգանքով՝

Արթուր Զավադյան

52





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒՄ

ԿՈԴ

050.0249 Ա. 30.09.10

30 սեպտեմբերի 2010 թվականի թիվ 249 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ  
ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ և 31-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո Ր Շ ՈՒ Մ է .

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եզրակացությունը (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Հայաստանի Հանրապետության  
կենտրոնական բանկի նախագահ

2010 թ. սեպտեմբերի 30  
թ. Երևան



Արքուր Զավառյան

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի  
եզրակացությունը Հայաստանի Հանրապետության 2011  
թվականի պետական բյուջեի նախագծի վերաբերյալ**

**1. “Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին”**

**Հայաստանի Հանրապետության օրենքի կատարման<sup>1</sup> գործընթացը**

Մակրոտնտեսական իրավիճակի աստիճանական բարելավման արդյունքում՝ պայմանավորված համաշխարհային տնտեսության վերականգմամբ և հակաճգնաժամային միջոցառումների շրջանակներում 2009 թվականին իրականացված հարկաբյուջետային, դրամավարկային քաղաքականությունների ընդլայնողական ազդեցությունների փոխանցմամբ, 2010 թվականի առաջին ութ ամիսներին արձանագրվեց 3.1% տնտեսական աճ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 18.4% անկման դիմաց:

Դեռևս տարեսկզբից նկատելի էին տնտեսական աճի ձևավորման միտումներ, որի պարագայում հարկաբյուջետային քաղաքականության համար ստեղծվել էր բարենպաստ միջավայր հարկերի հավաքագրման առումով, և բնականաբար ՀՆԱ-ում պակասուրդի կրծատման համար։ Միևնույն ժամանակ, 2009 թվականին իրականացրած խիստ ընդլայնողական դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների ազդեցությունների փոխանցմամբ, միջազգային շուկաներում հանքահումքային ու պարենային ապրանքների գների շարունակական աճով, ինչպես նաև ՀՀ-ում բնակչության անբարենսպաստ պայմանների հետևանքով զյուղմթերքների գների աճով պայմանավորված տարվա ընթացքում ՀՀ-ում բարձր գնաճային միջավայր է ձևավորվել։ Այս իրավիճակում, հաշվի առնելով բարձր գնաճային միջավայրի չեզոքացման անհրաժեշտությունը,

<sup>1</sup> 2010 թվականի տարեկան բյուջեի կատարման գործընթացի վերլուծության հիմքում ընկած է տարվա ութ ամիսների պետական բյուջեի նախնական փաստացի ցուցանիշները, իսկ տարվա համար սպասվողը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կանխատեսած ցուցանիշն է։

հարկաբյուջետային քաղաքականությունը տարվա ընթացքում ուղղորդվել է հակածգնաժամային քաղաքականությունից դեպի հավասարակշված հարկաբյուջետային քաղաքականությանը վերադառնալուն՝ մի կողմից չնպաստելով լրացուցիչ զնաճային ճնշումների առաջացմանը, մյուս կողմից չխոշընդոտելով տնտեսական աճի վերականգնմանը։ Մասնավորապես՝ 2010 թվականի ութ ամիսների տվյալներով հարկերի գծով գերակատարումը կազմել է 24.9 մլրդ դրամ<sup>2</sup>, սոցիալական ապահովության վճարների գծով 1.6 մլրդ դրամ, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ հավաքագրված հարկերը աճել են 20.9 տոկոսով և սոցիալական ապահովության վճարները՝ 14.0 տոկոսով։ Հարկերի գծով գերակատարումները ուղեկցվելով ծախսերի ծրագրված ցուցանիշի նկատմամբ որոշ տնտեսումներով նպաստել են բյուջեի պակասուրդի զգալի կրճատմանը։ Այսպես, ՀՀ պետական բյուջեի պակասուրդը տարվա ութ ամիսների նախնական տվյալներով կազմել է տարեկան ծրագրվածի ընդամենը 37.6 տոկոսը։ Բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների՝ մասնավորապես պետական արժեթղթերի տեղաբաշխման գծով, չնայած տարվա սկզբում առկա լարվածությանը, հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացման շնորհիվ հաջողվեց տարվա ութ ամիսների ընթացքում ապահովել պետական արժեթղթերի տեղաբաշխումից 12.3 մլրդ դրամ եկամուտ՝ նախադրյալներ ստեղծելով տարեկան ծրագրված ցուցանիշի ապահովման համար։

Այսպիսով, ՀՀ պետական բյուջեի ցուցանիշների ութ ամսվա ընթացքում ձևավորված վերը նշված միտումների պայմաններում, համախառն պահանջարկի վրա հարկաբյուջետային հատվածի ազդեցությունը նախատեսվածից քիչ ընդլայնող է եղել։ Ինչ վերաբերում է տարվա արդյունքում ակնկալվող

<sup>2</sup>ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների ութ ամսվա համար ծրագրված ցուցանիշի հիմքում ընկած է ՀՀ կառավարության կողմից սահմանած եռամսյակային համամասնություններով նախատեսված առաջին և երկրորդ եռամսյակների համար ծրագրված և հուլիս ու օգոստոս ամիսների համար ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կանխատեսած հարկային եկամուտների հանրագումարը։

միտումներին, ապա բյուջեի տարեկան ցուցանիշների գնահատված մակարդակների ապահովման պարագայում հարկաբյուջետային ազդակը տարվա արդյունքում գնահատվում է շուրջ 2.6 տոկոս<sup>3</sup> ընդլայնող, նախորդ տարվա համապատասխանաբար՝ 7.9 տոկոս ընդլայնողի դիմաց:

Հարկ է նշել, որ Կառավարության կողմից բյուջեի պակասուրդի կրճատման քաղաքականության հետ միասին ՀՀ կենտրոնական բանկը տարեսկզբից շարունակաբար խստացրել է դրամավարկային պայմանները՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքը առաջին կիսամյակի ընթացքում բարձրացնելով 2.25 տոկոսային կետով: Արդյունքում, հունիսին 12-ամսյա գնաճը նվազել էր մինչև 5.8 տոկոս, սակայն տարվա երկրորդ կիսամյակից սկսած գնաճի զարգացումների վրա գերակայել են առաջարկի գործոնները՝ ոչ բարենպաստ բնակլիմայական պայմաններում զյուղատնտեսական ապրանքների գների բարձր մակարդակի ձեավորումը և հացահատիկի միջազգային շուկաներում գների աճը, որոնք ել հանգեցրեցին կարճաժամկետ հատվածում գնաճի տեմպի արագացմանը:

Միևնույն ժամանակ, հարկ է նկատի ունենալ, որ գնաճային միջավայրի մեղմմանն ուղղված հարկաբյուջետային և դրամավարկային կոորդինացված քաղաքականությունների վերը նշված միտումների շարունակական պահպանման արդյունքում՝ կհաջողվի աստիճանաբար նվազեցնել գնաճը և 2011 թվականի ընթացքում ապահովել գնաճի հայտարարված  $4+/-1.5$  տոկոս նպատակային թիրախը:

Ամփոփելով, նշենք, որ 2010 թվականին մակրոտնտեսական կայունության ապահովմանն ուղղված հարկաբյուջետային քաղաքականության ծրագրերի հետևողական իրականացման և 2011 թվականին դրանց շարունակականության դեպքում հնարավոր կլինի ապահովել տնտեսական աճի կայուն և բարձր տեմպեր:

<sup>3</sup> Հարկաբյուջետային ազդակի ցուցանիշը՝ ԿԲ գնահատումներն են:

## 2. Եզրակացություն “Հայաստանի Հանրապետության

2011 թվականի պետական բյուջեի մասին”

Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

2011 թվականի ՀՀ պետական բյուջեի ծրագիրն ընդհանուր առմամբ արտացոլում է մակրոտնտեսական կայունության ապահովմանը և տնտեսական աճի խթանմանը նպաստող՝ 2010 թվականին ՀՀ կառավարության կողմից իրականացրած միջոցառումների շարունակությունը։ Ընդ որում, 2011 թվականի ՀՀ պետական բյուջեի ծրագրի հիմնական համամասնությունները պետք է բխեին ՀՀ միջին ժամկետ ծախսերի ծրագրի առանցքային հիմնադրույթներից՝ մասնավորապես, ՀՆԱ-ում հարկային եկամուտների տարեկան 0.4-0.5 տոկոսային կետ աճի ապահովում և պակասուրդի աստիճանական նվազեցում։

Նախագծում ներկայացված՝ 2010 թվականի համար սպասվող հարկերի և սոցվճարների գծով մուտքերը մեր կարծիքով թերազնահատված են, ինչը ապահովում է հարկեր/ՀՆԱ 17.1 տոկոս հարաբերակցություն և նախորդ տարվա նկատմամբ ընդամենը 0.3 տոկոսային կետ աճ։ Այս պարագայում, 2011 թվականի համար նախատեսված հարկեր/ՀՆԱ 17.3 տոկոս ցուցանիշը մեր կարծիքով նույնպես թերազնահատված է, ինչը նախորդ տարվա նկատմամբ ապահովում է ոչ բավարար՝ ընդամենը 0.2 տոկոսային կետ աճ։ Նույնիսկ այս դեպքում, 2011 թվականին ՀՆԱ-ի անվանական 8.5 տոկոս աճի պայմաններում հարկերի նախատեսված 9.9 տոկոս անվանական աճը բավարար նախադրյալներ չի ստեղծում Կառավարության միջին ժամկետ ուազմավարական ծրագրերի արդյունավետ իրագործման համար։ Ենելով միջին ժամկետ ծրագրերում արտացոլված համամասնությունների պահպանման կարևորությունից, կարծում ենք անհրաժեշտ է ջանքեր գործադրել մասնավորապես՝ 2011 թվականի

հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը Կառավարության միջին ժամկետ ուղմավարական ծրագրերին համահունչ ապահովելու համար:

Ողջունելի է Կառավարության ջանքերը բյուջեի պակասուրդի կրճատման և ֆինանսավորման ներքին աղբյուրների տեսակարար կշռի ավելացման առումով, ինչը հնարավորություն կտա առանց արտաքին պարտքի բեռի էական աճի, միջին ժամկետ հատվածում ապահովել տնտեսության կայուն զարգացում:

Վերոհիշյալ միջոցառումների իրականացման արդյունքում հնարավոր կլինի նպաստավոր նախադրյալներ ստեղծել տնտեսության արագ վերականգնման և, բավարար հիմքեր ապահովել միջին ժամկետ հատվածում տնտեսության կայուն զարգացման համար: Միաժամանակ, հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների արդյունավետ կոորդինացումը կշարունակի նպաստել մակրոտնտեսական կայունությանը՝ արդյունքում գնաճը աստիճանաբար կնվազի և 2011 թվականի ընթացքում գնաճը կձևավորվի նպատակային  $4 +/ - 1.5$  տոկոս միջակայքում: